լին եւ ի Կողբ», 730-ական թուականներին։

Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք յատակագիծը, որ պատրաստել էր ճարտարապետ Եղիազարեանցը մեր ներկայութեամբ, ընթերցողներին մնում է մօտաւոր գաղափար կազմել լուսանկարով (Պատկ. 1)։ Յատակագիծն ինքն ըստ ինքեան նորա հնութեան մասին շատ բան տալ չի կարող. երկարաձիգ չէնք է այն, որմնայեցների վերայ հաստատուած գմբեթով։ Այս ձեւի հնագոյն յայտնի եկեղեցին Արուճի Ս. Գրիգորն է՝ Մամիկոնեան Գրիգոր իշխանաց իշխանի կողմից կառուցուած 668 թ. եւ ապա Երազգաւորսը Թ. դարի վերջերում Սմբատ Ա.-ի կողմից։ Ունինք եւ Արագածի արեւելեան կողմը Արարանի Ծառայիչէն, այժմ Մոլլազասըմ կոչուած, գիւղում նման մի եկեղեցի, Գընթունեաց մի չէնք, որի մասին խօսք կը լինի յետոյ։

Ընթերցողը առաջարկուած լուսանկարից տեսնել կարող է, որ կործանուած է ոչ միայն գմբեթը, այլեւ արեւմտեան եւ արեւելեան պատերը. կանգուն է միայն հիւսիսայինը, (Պատկ. 2), արեւելեան եւ արեւմտեան պատերի անկիւններով, եւ հարաւային պատը կիսով չափ, այն էլ դրսից ուսումնասիրելի միայն վերին կէս մասով. ներքեւի մասը հարաւային կողմից ծածկուած է նոր եկեղեցու չէնքով։ Բայց այսչափն էլ բաւական է եկեղեցու ձեւի եւ յատակագծի մասին լիովին գաղափար կազմելու, մանաւանդ թեթեւ պեղումներով պարզուեցաւ ափսիդի եւ յա-

Պատկ. 2